

**ՌՈՒՍԻԱ**  
**ՓՈՒԹԻՆ ՉՆՁԵՅ ՄՈՍԿՈՒՍԻ ՄԷՋ ԱՄԵՐԻԿԵԱՆ «ԱԶՏԱՌԹԻՆ» ՌԱՏԻՈՎԱԿԱՆ ԶՄՈՒԿ ԴՆԵՂԱՄԱՆԸ**  
ՄՈՍԿՈՒՄ, 4 (ՌՈՅԹԸՐԶ)- Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին Ռոքք օր ջնջած է Մ. Նահապետի կողմէ քինաստորոտող «Ապստոլիս» ռատիոկայանին յատուկ հանգամանքը:  
Կայանը երկար առնէ ի վեր դժգոհ կը զգէ կրեմլինը՝ անջատողական շեշտով մասին իր հաղորդումներուն պատճառով: Փութինի հրահանգը ջնջած է իր հաղորդին Պրիս Ելցինի կողմէ 1991ին ստորագրուած հրամանագիրը, որ կայանին իրաւունք կու տար Մոսկուայի մէջ մասուն գրասենեակ մը հաստատել թղթակիցներու ցանցով մը եւ փոխով կայաններով:  
Աւելի ուշ, յարաբերութիւններ վատթարացած են, յատկապէս հիւսիսային կովկասեան լեզուներով, ներառեալ չեչէնեքիով սփռելու կայանին որոշումն ենք:

### ԼԱՀՈՒՏ - ՀԱՐԻՐԻ ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆ

## ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՐՑՈՎ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՔՈՆԿՐԵՍԻ ՕՐԻՆԱԳԻԾԸ Կ'ԱՆՏԵՍԷ ՄԱԿԻ ԹԻԻ 242 ՈՐՈՇՈՒՄԸ ԿԵՍԵ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՆՈՒՏ



Նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ շեշտեց, որ ամերիկեան Գոնկրէսին կողմէ Երուսաղէմը Իսրայէլի մայրաքաղաք հռչակելու որոշումը ամերիկեան այլ քայլ մըն է արար քրիստոնեաներու եւ իսլամներու զգացումները վիրաւորող, որովհետեւ անոնք Երուսաղէմը կ'ընդունին իրրեւ ուխտաւայր, որ կը մարմնակերպէ կրօնական շատ կարեւոր խորհրդանշաններ թէ՛ քրիստոնէութեան եւ թէ՛ իսլամութեան համար:

Նախագահ Լահուտ յայտնեց, որ ամերիկեան Գոնկրէսի այս որոշումը կ'անտեսէ ՄԱԿի թիւ 242 որոշումը, որ Երուսաղէմը կը նկատէ արաբական հող, որ պէտք է ազատագրուի իսրայէլեան լուծէն:

Նախագահ Լահուտ Միացեալ Նահանգներու կողմէ այս ճնշումը նկատեց անարդար եւ դիտել տուաւ, որ ան ճամբայ կը բանայ մօտիկ ապագային վերագրուած անտառի օրէնքին, ուր յաղթանակը զօրաւորին կ'ըլլայ:

Նախագահ Լահուտ երէկ ընդունեց վարչապետ Ռաֆիկ Հարիրի, որուն հետ քննարկեց ընդհանուր հարցեր, ինչպէս նաեւ Պէյրութի մէջ 18, 19 եւ 20 Հոկտեմբերին կայանալիք Ֆրանսախօս Երկիրներու վեհաժողովին պատրաստութիւնները եւ յառաջիկային «Փարիզ - 2» վեհաժողովին առնչուող հարցեր:

## ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՀԵՐՔԷ ԵՐԵՒԱՆ - ՊԱՔՈՒ - ԱՆԳԱՐԱ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԸ

Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը երէկ հերքեց Հայաստանի, Ազրայէյճանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարներու յառաջիկայ հանդիպման մասին հրապարակուող տեղեկութիւնները:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Ջիւնիկ Աղաջանեան, մեկնաբանելով Ազրայէյճանի մէջ Թուրքիոյ դեսպան Ունալ Չեւիթոզի յայտարարութիւնը, թէ երեք երկիրներու արտաքին գործոց նախարարներու հանդիպման վերաբերեալ որոշում կայացուած է այս տարուան Մայիս 13ին Ռէյքիւմէքի մէջ տեղի ունեցած հանդիպման ընթացքին, ըսաւ, թէ այդպիսի համաձայնութիւն չկայ:

## ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆ ՎԱԳԸ ԿԸ ՄԵԿՆԻ ՄՈՒՏԱԻՍ

Անկախ Պետութիւններու Հասարակապետութեան (ԱՊՀ) անդամ երկիրներու ղեկավարներու խորհուրդի նիստին մասնակցելու համար Հայաստանի նախագահ Ռուպիք Քոչարեան վաղը պիտի մեկնի Մոլտաւիա: Նախագահին կ'ընկերակցի նախարարներէ, դեսպաններէ եւ այլ պաշտօնատարներէ բաղկացած բարձրաստիճան պատուիրակութիւն մը: Նախագահ Քոչարեան Քիշինի մէջ հանդիպումներ պիտի ունենայ Ռուսիոյ եւ Վրաստանի նախագահներուն հետ, ինչպէս նաեւ՝ Արարիկեանի նախագահ Հայտար Ալիեւի հետ, ԵԱՀԿի Մինսքի խմբակի նախագահներուն հետ:

## ԻՍՐԱՅԷԼԱՅԻ ՈՍՏԻԿԱՆՆԵՐ ՆԵՐԽՈՒԺԵՑԻՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԷՋ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՍՐԲԱՎԱՅՐ ՍԸ



Իսրայէլի ոստիկանութիւնը՝ ձեռնառու մըբեր նետելով, ներխուժեց Երուսաղէմի մէջ իսլամական սրբավայրերէն մէկուն վրայ, ցրուելու համար պաղեստինցիներ, որոնք քարկոծած էին հրէական սուրբ վայրի մը՝ Արեւմտեան Պատին մօտ հսկող ոստիկաններ:

Պաղեստինցիները ոստիկանները քարկոծած էին բողոքի ցոյցի մը ընթացքին: Անոնք կը բողոքէին ամերիկեան նոր օրինագիծի մը դէմ, որ ձորձ Պուշի կառավարութեան կը պահանջէ Երուսաղէմը ճանշնալ իրրեւ Իսրայէլի մայրաքաղաքը:

Ականատեսներ յայտնեցին, որ մօտաւորապէս յիսուն ոստիկաններ ներխուժեցին Արեւելեան Երուսաղէմի գլխաւոր քարերու տարափի մը տակ առած էին դէպի հրէական սրբավայր տանող ճամբու մը վրայ հսկող ոստիկանները: Բանբերը աւելցուց, որ առաջին հերթին տիրած էր այն ենթադրութիւնը, թէ պաղեստինցիները պիտի քարկոծեն նաեւ հրէական սրբավայրը ուղղուող հաւատացեալները:

Ոստիկանութիւնը հրետանին պահանջեց ամիջապէս հեռանալ շրջանէն: Բանբերը յայտնեց նաեւ, որ Աքսա մզկիթը տնօրինող իսլամա-Շար.՝ էջ 10

Շար.՝ էջ 10

## Ի ՏԵՍ ՄԱԿԻ ԲՆԻՉՆԵՐՈՒՆ ՊԱՂՏԱՏ ՄԵԿՆՈՒՄԻՆ ՅԵՏԱԶՊԱՆ ԻՐԱՔ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿԱՐԳ ՄԸ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Իրաքի իշխող Պասսկուսակցութեան պաշտօնաթերթը «Վախկոտութեամբ» ամբաստանեց Ապահովութեան խորհուրդի կարգ մը պետութիւններ, որոնք քաղաքացիներու վերջին սպառնալիքը գործածելու Միացեալ Նահանգներու կողմէ առաջարկուած բանաձեւին դէմ: «Սաուրա» թէեւ չի ընդունուած պետութիւնները, սակայն չի սպառնար վերջին ենթարկել ամերիկեան բանաձեւը, որուն զօրավիգ կը կանգնի Բրիտանիա:

Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին երէկ կոչ ուղղեց ամէնէն արագ ժամանակամիջոցին մէջ Իրաքը ուղարկելու ՄԱԿի գէնքի քննիչները: Փութին կը հակադարձէր Հինգաբլի գիշերուան լուրերուն, ըստ որոնց ՄԱԿի քննիչներուն իրաք մեկնումը պիտի ուշանայ՝ սպասելով Ապահովութեան խորհուրդին կողմէ նոր որոշումի մը: Փութին ըսաւ, որ անհրաժեշտ է երաշխաւորել ԱՆՄՈՎԻՔի քննիչներուն արագ վերադարձը:

Հուլիսին ներկայացուցած իրենց գեղեցումին մէջ սակայն անոնք յայտնեցին, որ պիտի ուշացան նաեւ պատուիրակութեան առաջումը, եթէ մինչ այդ չորդեգրուի Ուաշինկթօնի ու Լոնտոնի կողմէ հետապնդուած նոր բանաձեւ մը:

ՄԱԿԻ ԳԷՆԵՔԻ ՔՆՆԻՉՆԵՐԸ ՀԻՆՊՆԱԳՐԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ՄԱԿԻ ԳԷՆԵՔԻ ՔՆՆԻՉՆԵՐԸ

ՄԱԿԻ ԳԷՆԵՔԻ ՔՆՆԻՉՆԵՐԸ ՀԻՆՊՆԱԳՐԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ՄԱԿԻ ԳԷՆԵՔԻ ՔՆՆԻՉՆԵՐԸ

ՄԱԿԻ ԳԷՆԵՔԻ ՔՆՆԻՉՆԵՐԸ ՀԻՆՊՆԱԳՐԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ՄԱԿԻ ԳԷՆԵՔԻ ՔՆՆԻՉՆԵՐԸ

ՄԱԿԻ ԳԷՆԵՔԻ ՔՆՆԻՉՆԵՐԸ ՀԻՆՊՆԱԳՐԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ՄԱԿԻ ԳԷՆԵՔԻ ՔՆՆԻՉՆԵՐԸ

ՄԱԿԻ ԳԷՆԵՔԻ ՔՆՆԻՉՆԵՐԸ ՀԻՆՊՆԱԳՐԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ՄԱԿԻ ԳԷՆԵՔԻ ՔՆՆԻՉՆԵՐԸ

ՄԱԿԻ ԳԷՆԵՔԻ ՔՆՆԻՉՆԵՐԸ ՀԻՆՊՆԱԳՐԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ՄԱԿԻ ԳԷՆԵՔԻ ՔՆՆԻՉՆԵՐԸ

## ՄԻՆՉ ՉՄԻԱՍՔԻ ՄԷՋ ՄԹՆՈՒՈՐՔԸ ՀԵՏՉՀԵՏԷ ԿԸ ԸԻԿԱՆՍՅ

## ՎՐԱՍՏԱՆ ԿԸ ՀԱՐՈՒՆԱԿԷ ՀԱԿԱՌՈՒՄ ԶԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վրաստանի խորհրդարանի միջապգային հարցերու յանձնաժողովի փոխ նախագահ Գիվի Շուկարով, որ ըստ հայրենի «Այգ» թերթին ունի հայկական ծագում, վկայակոչելով Վրաստանի մէջ Հայաստանի դեսպանութիւնը, երէկ յայտարարած է, որ գոյութիւն չունի «Ա-ԻՆՏՅՕ» անունով հայկական լրատուական գործակալութիւնը: Հոկտեմբեր 1ին, նշեալ գործակալութիւնը յայտնած էր, որ չեչէն փնտալներ Վրաստանի Փանքիսի կիրճէն կը հեռանան դէպի արեւելի ապահով շրջաններ եւ իրրեւ այդպիսին նախընտրած են Վրաստանի Ջաւախք նահանգը:

Գիվի Շուկարով «Ինթեր - Փրէս» վրացական գործակալութեան յայտնած է, որ «Ա-ԻՆՏՅՕ» ունի ռուսական ծագում, «Ռուսիայէն Վրաստանի նկատմամբ կարելի է սպասել քաղաքական լուրջ սարսափներ եւ թէ Մոսկուա շահագրգիռ է Վրաստանի մէջ ստեղծելու տագնապի գօտի մը եւս», աւելցնելով. «Հայաստանի շահերէն չի բխիր Ջաւախքի մէջ տագնապի գօտի մը ստեղծումը»:

«Ա-ԻՆՏՅՕ» երէկ պատասխանեց իր հասցէին կատարուած ապատեղեկատուութեան: Լրատուական գործակալութեան տնօրէնութիւնը յայտարարեց, որ «Ա-ԻՆՏՅՕ» չունի ռուսական ծագում: Գործակալութիւնը Վրաստանի մէջ գրանցուած է իրրեւ լրատուական կեդրոնի եւ կը գործէ 2002 Յունուարէն ի վեր, եւ այս մասին հրապարակումներ եղած են վրացական մամուլին մէջ:

«Յարգելի պատգամաւորին անտեղեկութիւնը այս մասին չի նշանակեր, թէ լրատու գործակալութիւնը գոյութիւն չունի», յայտարարած է «Ա-ԻՆՏՅՕ», աւելցնելով, որ գործակալութիւնը կը փորձէ լուրերը ներկայացնել առանց վերլուծութեան՝ այդ մէկը ձգելով հասարակութեան:

● ՉՄԻԱՍՔԻ հասարակական - քաղաքական կազմակերպութիւններու մօտ մեծ լուրում յառաջացուցած է 1988էն ի վեր Ջաւախքի հասարակական - քաղաքական կեանքի աշխուժման ակտիւ «Ջաւախք» ժողովրդական շարժման հիմնադիրներէն «Վիրք» Կուսակցութեան անդամ Ֆետիա Թորոսեանի ձեռնարկութիւնը: Պաշտօնապէս, անոր ձեռնարկութիւնը պատճառաբանուած է Արալքալաքի շրջանի ելեկտրական ցանցի տնօրէն եղած ժամանակաշրջանին կատարուած նիւթական հաշիւներու անփութութեամբ: Սակայն, Ջաւախքի հասարակական - քաղաքական կազմակերպութիւններու ներկայացուցիչներու կարծիքով, Ֆետիա Թորոսեանի ձեռնարկութիւնը քաղաքական նպատակներով եղած է:

## ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ՖՐԱՆՍԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՆԱՆՈՒՐ ՏԵՕՐԵՆԸ

## ՖՐԱՆՍԱ ՉԱՓԱԶԱՆՅ ԿԱՐԵՒՈՐ ԵՐԿԻՐ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԶԱՅՏԱՐԱՐԵՅ ՆԱԽԱԳԱՀ ԸՈՉԱՐԵԱՆ



Հայաստանի նախագահ Ռուպիք Քոչարեան երէկ ընդունեց Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար Ռընօ Միւլլիէնը, որ Պաքու եւ Թիֆլիս այցելելէ ետք 3 Հոկտեմբերին գիշերը հասած էր Երեւան: Պաքուի մէջ, ըստ ազրայէյճանական «Կազէք 525» թերթին, Միւլլիէն քննարկելով Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծ-

### ՆԱԽԱՐԱՐ ՀԵԼՈՒ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ ԵՐԿԻՐԸ ՄԵՎ ԸՆՏՐԱՇՐՋԱՆԻ ՎԵՐԱԾԵԼՈՒ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ

Պետական նախարար Փիեռ Հըլլու երկհ հրապարակեց հարողգազրուցի մասին, որում մեջ նկատելի տուաւ, որ ամբողջ Լիբանանը մէկ ընտրաշրջանի վերածելու առաջադրանքը քաղաքական երկրաշարժ մըն է, որ պիտի հարուածէ լիբանանեան կառուցչին միջնաբերդը: «Քաղաքական կեանքին մէջ գործունէութեան սկսելէս ի վեր ընտրական նոր օրէնքի ամենավատ տարբերակն է Լիբանանը մէկ ընտրաշրջանի վերածելու ծրագիրը», ըսաւ Հըլլու:

Հըլլու խստիւ քննադատեց ընտրական օրէնքի նշեալ ծրագիրը, զայն նկատելով խախտում թահֆի համաձայնութեան, իսկ ծերակուտական խորհուրդի մը կազմութեան հաւանականութեան մասին ան յայտնեց, որ այդ աշխատանքը կը մնայ «փորձարկումի համար գործածուող փուլիկներու» հանգամանքին մէջ:

### ՆԱԽԱՐԱՐ ՍԵՐ ՄԵԿՆԵՑԱԻ ՖՐԱՆՍԱ

Ներքին գործոց եւ քաղաքապետութեանց հարցերու նախարար Հիւսա Սեր երէկ մեկնեցաւ Ֆրանսա՝ մասնակցելու եւրոպական վարչապետներ եւ ազգային ղեկավարներու դաշինքի անդամ երկիրներուն Զրդ վեհաժողովին:

### ՊՐԱԶԻԼՅԻ ԴԻԿԱՆԱԳԵՏԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՉ

Պրազիլի արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար Օսմար Վլադիմիր Կոֆի երէկ այցելեց արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտի, որուն հետ քննարկեց Պրազիլի լիբանանեան գաղութին առնչուող հարցեր, որու ատենով լիբանանցիներուն կարեւոր ներդրումը Պրազիլի մէջ:

Ան շեշտեց նաեւ Պրազիլի զօրակցութիւնը բոլոր այն միջազգային որոշումներուն, որոնք կը պարտադրեն Լիբանանի իրաւունքի յարգումը, յատկապէս ինչ կառնչուի Ուազգանիի ջրերէն Լիբանանի իրաւունքներուն:

Կոֆի հանդիպում մը ունեցաւ նաեւ լիբանանցի իր պաշտօնակիցին՝ Մուհամետ Իսայի հետ: Հանդիպումին ստորագրուեցան չորս համաձայնութիւններ, որոնց մեծ մասը կը վերաբերի դատական իշխանութիւններու մարզին, ինչպէս ոճրագործներու փոխանակում, քրէական հարցերու մէջ դատական օժանդակութիւն եւ քաղաքացիական հարցերու պարագային դատական գործակցութիւն:

Կոֆի այցելեց նաեւ յոյն ուղղափառներու Պէյրութի առաջնորդ էլիսա Աուտէ Եպիսկոպոսին: Քննարկուեցան եկեղեցական հարցեր:

### ՎԱՐՉԱՊԵՏ ԸԱՐԻՐԻ ԸՆՆԱՐԿԵՑ Ա. Մ. ԷՄԻՐՈՒԹԵԱՆՑ ՇԵՑ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՊՈՒԱԾ ԸՆՆԱՐԿԵՐ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ Քըրայ-թէմի մէջ ընդունեց Արաբական Միացեալ Էմիրութիւններու դեսպան Մոհամետ Համմուտ Օմրան:

Համմուտի պաշտօնը քննարկուեցան Լիբանանի մէջ ներդրումներ կատարելու յարցը: Մոհամետ Օմրան շեշտեց, որ Լիբանանի մէջ ներդրումներ կատարելու յարցը կը մնայ «փորձարկումի համար գործածուող փուլիկներու» հանգամանքին մէջ:

### ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախագահ Լահուտ երէկ ընդունեց պետական նախարար Պարա Մըրհէ-ժը: Քննարկուեցան երկրի մէջ տիրող ներքին քաղաքական միջնուրրը, ինչպէս նաեւ շրջանային հարցեր:

Մըրհէ-ժը յայտնեց, որ Լիբանանի քաղաքական կեանքին մէջ տիրող չոր եւ լարուածութիւն ստեղծող ճառերը պէտք է աւարտին, ուղղուելով դէպի աւելի հաւասարակշիռ եւ կոչերու, որոնք անպայման կը ստեղծեն ազգային միասնականութիւն եւ Լիբանանը կը զօրացնեն արտաքին որեւէ սպառնալիքի դէմ:

### ՆԵՊԻՉ ՊԸՐԻԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԸ

Պրազիլի նախագահ Նեպիտ Պըրըի երէկ Այնէլ Թիւնէի մէջ ընդունեց բանակի վարչական տնօրէն Գոր. Իսամ Ալ-Մուհի, ինչպէս նաեւ Սալալայի, Սուրիի եւ Նապալթիի թաղապետները, որոնց հետ քննարկեց քաղաքական հարցեր: Պըրըի այցելեցին նաեւ Սալալայի, Սաքաբէի, Ուազգանիի, Ազուրիի եւ Ռեհանիի ժողովրդական պատուիրակութիւնները:

Միւս կողմէ, Պըրըի ընդունեց Պարագուայի առեւտրականներու միութեան մէկ պատուիրակութիւնը, նախագահութեամբ Ռաշիտ Բրազիլի: Հանդիպումին քննարկուեցան տնտեսական կացութիւնը եւ առեւտրի մարզին առնչուող շարք մը հարցեր:

Պըրըի գոհունակութիւն յայտնեց պատուիրակութեան տարած աշխատանքներուն գծով, պատրաստակամութիւնը յայտնելով օժանդակել որեւէ նախաձեռնութեան, որ կը նպաստէ առեւտրի մարզի բարելաման:

### «ՃՈՆ ԿՈՒՐՃ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ

«Ճոն Կուրճ» համալսարանական կրթաթոշակէն օգտուիլ ուզող սան-սանուհիներ պարտին անձամբ ներկայանալ Սեծի Տան Կիլիկիոյ կաթողիկոսութեան դիւանատունը, Անթիպիս, խնդրագրով մը, 16 Շոկտեմբերէն 31 Շոկտեմբեր 2002, առաւօտեան ժամը 9Թ 12ի միջեւ, իրենց հետ բերելով:-

- 1.- 2001-2002 ուսումնական տարեշրջանի ամա-վերջի քննութեան արդիւնքները:
2.- 2002-2003 տարեշրջանի համալսարան ընդունման հաստատագիրը:
3.- 2002-2003 տարեշրջանի տարեկան ծախսերուն տախտակը:
Նոր թեկնածուներ, որոնք արդէն իսկ պետական պարալոնտ ստացած են, պարտին ներկայանալ գրասենյակ ստանալու համար իրենց դիմումագրին կցելիք թղթածրարը, գոր պէտք է ամբողջացնեն ու ներկայացնեն կաթողիկոսարան, մինչեւ 31 Շոկտեմբեր 2002:

Բժշկական եւ ձարտարապետական ձիւղերու թեկնածուներ չեն կրնար օգտուիլ վերոյիշեալ կրթաթոշակէն:

«ՃՈՆ ԿՈՒՐՃ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՅԱՆՉՆԱՆՈՒՄԲ Ծանօթ.- 31 Շոկտեմբերէն ետք եղած դիմումները պիտի մերժուին: Պիտի մերժուին նաեւ անոնք, որոնք թղթածրարները լրիւ չեն:

Բարձր Հովանաւորութեամբ Երկրասարգութեան եւ Մարմնակրթութեան Նախարար ՏՈՔԹ. ՍԵՊՈՒՀ ՅՈՎՆԱՆԵԱՆԻ Կազմակերպութեամբ Հ.Յ.Գ. ԶԱԲԱՐԵԱՆ ՌԻՍԵՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԿԵԱՆ Տեղի կունենայ Շաբաթ. 2 Նոյեմբեր 2002ին, երեկոյեան ժամը 9:00ին, Metropolitan Palace դահլիճի, «Dubai Hall» ծաշարանին մէջ. Հըրշ Թաղթ:

### ՏԵՍԱԿԵ ԹԻՖԼԻՍ - ՊԱՔՈՒ - ԱՆԳԱՐԱ ԵՄԱՍԻՆ ԴԻՄԱՑ ԻՆՉՈ՞՞՞ ԿՈՒՇԱՆԱՅ ԹԵՅՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ՄՈՍԿՈՒԱ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Պատմութիւնը միշտ այ ինքզինք կրկնած է ու կր կրկնէ: Այսօր տարբեր չէ երէկէն: Կովկասի մէջ պատմական ընթացքը քսանմեկերորդ այս դարուն յար եւ նման է տասնիններորդին. յստակ քաղաքականութիւն մը կ'ուրուագծուի դարձեալ Թիֆլիս - Անգարա գիծին վրայ: Այսօր միայն փոխուած է անոնց կնքահայրը. երբեմնի Լոնտոն իր դիրքը վիջեց դաշնակց Ռուսիայի դիրքին: Առաւել, բեմահարթակ բարձրացած է Արարկիւնի շինծու պետութիւնը, որուն անունն անգամ գոյութիւն չունէր քարտէսին վրայ մինչեւ նախորդ դարուն քսաներորդին սկիզբը: Այնպէս ոչինչ փոխուած է երբեմնի պատկերէն: Այլ խօսքով՝ Անգարա - Թիֆլիս շահերը դարձեալ կը նոյնանան ընդդէմ Մոսկուայի, այնպէս ինչպէս տասնիններորդ դարուն, երբ Անգարա իր շուրջ կը համախմբէր շրջանի թրքացեղ տարրերը ընդդէմ Մոսկուայի, դաշնակց ունենալով Թիֆլիսը, որ միշտ այ յարմար առիթին կոնսակէն հարուստած է Մոսկուային, չհանդուրժելով անոր գերակայութիւնը: Օրին, Անգարա իր բեմ գերակայութիւնն այս բոլորը կը հովանաւորէր, որպէսզի Ռուսիա, (որ միշտ այ ու մինչեւ օրս Կովկասի տէրն է) իր հակադիր դիրքը չկարենայ հաստատել ներուցներուն ու հասնիլ տաք ջուրեր (Մեծն Պետրոսի մեծագոյն երայր), եւ որպէսզի դէպի Հնդկաստան ճամբան անարգել մնայ Լոնտոնի դիրքը: Առեւտրատնտեսական այս շահերէն մեկնած, այսօր նոյնն է իրավիճակը: Լոնտոնը փոխարինած Ռուսիան ինչպէս քարտէսի վրայ հաստատուած էր Մոսկուայի, նաեւ Մոսկուայի հակառակ դիրքին, որուն անմիջական մէկ օղակը կը կապուէր նաեւ Արարկիւնի, Ռուսիայի հաստատարին նախնակից ծառան:

Թիֆլիս - Պարու - Անգարա ճակատին վերջին «յաղթանակը» կարելի է նկատել Թիֆլիս - Պարու - Ճեյիան քարտէսագրի հիմնարկէքը, որ կատարուեցաւ ի հեճուկ Ռուսիոյ, Իրանի եւ Հայաստանի շահերէն: Առաւել՝ Ռուսիոյ, Արարկիւնի եւ Վրաստանի ոչ միայն հակառակ, այլ նաեւ աներկիւմէտ քաղաքականութիւնը, որուն փաստը անոնք կու տան օրն իր ներքին քաղաքացիական կեցնածքներով, առայժմ քայլ մը յառաջ կը տանի պատերազմի Մոսկուային:

Այս բոլորին ի տես, մասնաւոր հայ մարդուն համար անխուսափելի կը դառնայ հետեւեալ հարցումը. ի դէմ Թիֆլիս - Պարու - Անգարա ճակատին, ինչո՞ւ կ'ուշանայ թեմերու - Երեւան - Մոսկուայ լուրջ դաշնակցութիւնը: Չէ՞ որ երեքին հասարակաց շահերը հարիւր տոկոս կը համընկնին իրարուն ինչ կը վերաբերի համաքրասականութեան վտանգին: Բարարար չէ՞ այս տուեալը (որուն մասին թէն ոչ մէկը հրապարակաւ կ'արտայայտուի, սակայն անիկա կը մնայ պարտեւ վտանգ սպառնացող լուրջ հարց մը) վարկեան առաջ կապուելու վերոյիշեալ դաշնակցութիւնը: Ճիշդ է, որ այնպէս Ռուսիա եւ Իրան այդքան այ հաշտ աչքով չեն դիտեր վիրար յաղակահալ Կասպիցի հարցով, այստեղ անդերձ անոնց գլխուն նոյնքան կախուած է համաքրասականութեան դիմակիւնն սուրբ որքան Հայաստանի: Հետեւաբար թեմերու - Երեւան - Մոսկուայ գիծին անհրաժեշտութիւնը օրէ-օր կը շեշտուի ու կը դառնայ իրամայական:

Բայց ամենին անիկ մե՞նք, հայերս շահագրգռուած ենք անշուշտ այդ դաշնակցութեամբ: Թրքական եւ արարկիւնական թշնամական կեցնածքը Հայաստանի նկատմամբ բացայայտ է: Վրաստանի անարկելի կեցնածքը այսօր Ջուախի հարցով դարձեալ ի յայտ կու գայ եւ անգամ մը եւս համապատասխանութեան մէջ վաղուց տեղաւորուած հաստատումին թափ կու տայ, թէ վրացիները երբեք հաշտ աչքով չէ դիտած ու պիտի չդիտեն հայը եւ ամէն առիթի պիտի չվարանի հարած մը հասցնելու մէջի:

Որե՞մն: Կը մնայ Երեւանի դրացի թեմերանի հետ այսօրուան մեր բարական յաւ յարաբերութիւնները հետպիտէտ սերտացնել, իսկ Մոսկուայի հետ մեր արդէն իսկ լուրջ դաշնակցութիւնը եւ փոխադարձ վստահութիւնը ամրապնդել: Տասնեօթներորդ դարին խնդրուող, Իսրայէլ Օրինով պայ Դաւիթ Բէկով ուրուագծուած է Երեւան Աշտարակեցիով ներկայականացած մեր ռուսական արեւելումը երբեք չէ սխալած կրկնական ստույժով, հակառակ հայեւոտու պարագայական ընդհարումներուն ու անհամաձայնութիւններուն: Դարեր ամբողջ մեր ժողովրդային մտածողութեան մէջ իր բնականային մղում հարապատօրէն ընկալուած է «ռուսին սուրբ միշտ կտրուի մնաք» հակադիր դիրքը: Այսօր այ - եւ անիկ քան երբեք - կ'ընդունինք այդ բացարձակ իրականութիւնը, բայց անեղծելով. «Նաե՛ւ հայուն սուրբ»:

### ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

### ՄՊԱՅԻՑ ՎԱՐԺԱՐԱԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ՝ 30 ՍԵՊՏԵՄԵՐԻՆ 26 ՅՈՎՏԵՄԵՐԸ

Հայկական երեսփոխանական գրասենյակը կը տեղեկացնէ, թէ պաշտպանութեան նախարարութիւնը կը յայտարարէ, որ կարիք ունի ուսանողներու՝ օղային, ծովային եւ ցամաքային շոկատներու համար սպասելի պատրաստելու նպատակով: Հետեւաբար, բանակի հրամանատարութիւնը կը կ'ուղղէ բոլոր այն քաղաքացիներուն եւ բանակայիններուն, որոնք պետական պարալոնտայի վկայական ստացած են եւ յաշտուած՝ առնուապէս 12/20 միջինով, եւ կամ այս վերջինին համապօր վկայական մը ունին, դիմելու Սպայից վարժարան՝ 30 Սեպտեմբերէն մինչեւ 26 Հոկտեմբեր 2002: Հայ քաղաքացիները, որոնք հետաքրքրուած են կրնան դիմել հայկական երեսփոխանական գրասենյակ, Շաղոյեան կեդրոն, Պորճ Համուն: ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

«ԱՂԹԱՍԱՐ» ՏՆԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՄ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ Ձեր ձեռնարկին պաշարին համար պահանջեցէք LOUJI «Աղթամար» պահածոները, պատրաստուած առանց քիմիական նիւթերու եւ արեւու բնական քերտութեամբ՝ ծիրանի, թուզի, բալի (վայրի կեանք), մարիջի, դրոմի եւ սերկելիի անուշներ, կարմիր պղպեղի (փոշի եւ մածուկ), ամառուխի փոշի, թրուաշներ ու լոլիկի պահածոներ, եւ այլն: Փնտռեցէք Spinneys, St. Elleh, Marche Sako (Չալքա), Makhlouf (Տոր): Mini Market Marash Garohամեմավաճառներ՝ Ներսեսի, (Պորճ Համուն), ինչպէս նաեւ Փուտ Իշխանեան (Չորաք Էլ Պլաթ) եւ LOUJI «Ա. Պուլղուրեան» ընկերաբժշկական կեդրոն, 4րդ յարկ: Այս վաճառքէն զոյացած գումարները կը ծառայեն LOUJI կրթական, ընկերային ու առողջապահական նպատակներուն: LOUJI ԶՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՄԱՀԱԶԴ ԵՏԵՐ եւ տիկին Սարգիս եւ Զուարթ Նաճարեան եւ զաւակը՝ Միհրան Տէր եւ տիկին ինչիկ Մկրտիչեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Մարտիրոս Մկրտիչեան եւ զաւակունք Օրդ. Միւզան եւ արն. Յովհաննէս Մկրտիչեան Ասատուրեան ընտանիք Գճըլեան ընտանիք Թէլեան ընտանիք Նաճարեան ընտանիք Գոյումեան ընտանիք Մարտուի ընտանիք եւ համայն ազգականներ կը գուծեն իրենց մօր, մեծ մօր, զոքանչին եւ հարազատին՝

ԱՐՈՒՍԵՒԱԿ ՍԿՐՏԻՉԵԱՆԻ (Ծնեալ՝ ԹԷԼԵԱՆ, 1919ին) մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 3 Հոկտեմբեր 2002ին, գիշերը, յետ երկարատեւ հիւանդութեան: Յուղարկուողութեան արարողութիւնը կատարուեցաւ Ուրբաթ, 4 Հոկտեմբեր 2002ին, կէսօրէ ետք ժամը 2:30ին, Նոր Մարաշի Ս. Քառանից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պորճ Համունի Ազգային գերեզմանատունը: •Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ: •Ցաւակցութիւնները կ'ընդունուին տէր եւ տիկին Սարգիս Նաճարեանին բնակարանը, Նիւ Ժուէյ-տի, «Հիքմէ» փողոց, «Պանք Մետիթերրանէ»ի կից, «Նայիրի» շէնք, 6րդ յարկ, Ուրբաթ 4, Շաբաթ 5 եւ Կիրակի 6 Հոկտեմբերին:



www.mesrobian.com

Արամագրություններ  
և Էլեկտրոնային  
260504

JEWELRY Design  
DIAMOND Setting  
WAX Molding  
GEMOLOGY

HAIR STYLING  
MAKE UP  
Վարմեր արհեստագր  
միզես և Գունահամա  
վայելալ վարմեր  
առանց անհի

Tele-Video &  
Radio Repair  
Car Electricity  
& Electronics

COMPUTER  
Software & Hardware  
INTERNET  
Ինտերնետի և Ինտերնետի

English  
For International  
Business  
TOEFL - Cambridge  
University Certificate  
+ 8 օտար լեզուներ

MESROBIAN  
TECHNICAL COLLEGE  
3 ամսյա  
20 ամսյա  
փորձառություն

TICKETING  
IATA  
Գործի Բաց  
Անցագիր  
Ուղևոր Երկրորդ մեջ

LCCIEB  
Business  
Մասնագիտություններ  
վկայական Լոնդոն

B.T.  
Համալսարան  
և  
Գործ  
Երկու ընտրություն  
մեկ վկայականով

### ԱԿՆԱՐԿ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿԸ

Ամերիկահայությունը պետք է դրական նախաձեռնությամբ վերաբերի Լիբանանի մեջ Արևելյան-Հ.Մ.Ը.Մ.ի մարզամշակութային կեդրոնին: Տնտեսական տագնապի մեջ տուժած Արևելյան-Հ.Մ.Ը.Մ.ի մարզամշակութային կեդրոնը մեր գաղութը կրթության մեջ կհարգի մեր գաղութը կեանքի վերածել:

Լիբանանի մեր գաղութին ազգային կանոնները, յատկապես կրթական մարզը լուրջ գծադրություններ կը դիմագրաւեն: Սակայն մեկի ձգելով առաջնահերթություններու խնդիրը՝ պետք է հաստատել, որ լուրջ իրագործում է եղածը, որովհետեւ նման վայրերու մեջ է, որ գաղութի հաւաքական կեանքը իմաստ կը ստանայ, կը զարգանայ: Անպայման ծուռ նստելու պետք չկայ շիտակ խօսելու համար:

«Բալիֆորնիոյ մեջ ամերիկահայությունը նման կեդրոն մը չունի» ըսելը թերի հաստատում մըն է: Լիբանանի հայութեան այս իրագործումը պետք է մեզ մտածելու մղէ, որովհետեւ բաղադրատարր շատ անելի մեծ է նույնիսկ Լոս Անջելես եւ շրջակայքը ապրող ամերիկահայերու թիւը եւ հետաքրքիր նաեւ՝ մեր կարիքները անելի մեծ տարողություն ունին:

Իսկ երբ տնտեսական սուր տագնապի մեջ ապրող գաղութ մը կրնայ նման կեդրոն մը բարձրացնել, համեմատաբար շատ անելի բարձր պայմաններու մեջ ապրող մեր գաղութը նույնը կրնայ ընել՝ թերեւս անելիով:

Ահաւասիկ նոր մարտահրաւեր մը մեր գաղութին մեջ գործող մարզական, մշակութային կամ ընկերային-բարեսիրական բոլոր կազմակերպություններուն համար: Ոչ ոք բող մեղադրէ մեր ժողովուրդը անտարբերութեան մեջ: Երբ ծրագիր եւ հեռանկար ցոյց տուած ենք մեր ժողովուրդին, ան քալած է այդ ուղղութեամբ եւ ընդառաջած է կատարուած կոչներուն: Մշակուած ծրագիրները կրնան իրագործուցնելու առաջնորդել:

Մեզմէ իւրաքանչիւր մտածելիք, ըսելիք եւ ընելիք պետք է ունենայ այս ուղղութեամբ: Բանի մը օր առաջ ոչ ոքի մտքէն կ'անցնէր, որ Փաստենայի հայությունը պիտի կարենար առնել այն քայլը, որ առաւ: Բայց կրցաւ առնել, որովհետեւ յստակ, տեսանելի ծրագիր կար: Հետեւաբար պետք է դաս առնել Լիբանանէն եւ Փաստենայէն:

ՎԱՉԷ ԲՐՈՒՏԵԱՆ

### ԱՄԵՐԻԿԱՆԱՅ ԿԵԱՆԸ 650 ՀԱԶԱՐ ՏՈՒՆԱՐԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ՝ Ի ՆՊԱՍՏ ՓԱՍՏԵՆԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱՌՈՒՑՄԱՆ

Ուրբաթ, 27 Սեպտեմբերին, Փաստենայի Հայ Կեդրոնին մէջ տեղի ունեցած է Հանգանակութիւն մը, հովանաւորութեամբ թեմի առաջնորդ Մուշեղ եպս. Մարտիրոսեանի եւ ներկայութեամբ աւելի քան հինգ հարիւր հոգիի:

Երեկոյթին բացման խօսքը կատարած է Կարօ Մոմճեան, որ շեշտած է Հայ Եկեղեցւոյ անհրաժեշտութիւնը Հայոց դարաւոր պատմութեան ընթացքին եւ գոհունակութիւն յայտնած է, որ Փաստենայի Եկեղեցւոյ կառուցումը տեղի պիտի ունենայ Անիի Մայր տաճարի կառուցման հազարամեակի տօնակատարութեան օրերուն: Բացման խօսքէն ետք Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Նարեկ քնն. Փեհլիվանեան ըսած է, որ տասնեօթը տարիներ ետք Փաստենայի Հայութիւնը կ'իրականացնէ Եկեղեցի մը կառուցելու իր երազը:

Ապա շրջանին Հ. Յ. Դ. «ԼեւոնաՎայր» կոմիտէի ներկայացուցիչ Ներսէս Մելքոնեան ըսած է, որ Հ. Յ. Դ-ականացութիւնը կը հաւատայ ազգային հոգեւոր արժէքներուն եւ կը գիտակցի, որ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին լաւագոյն միջոցներէն մէկն է Հայ մշակոյթի եւ աւանդութիւններու պահպանման ու բարոյական արժէքներու ամրապնդման համար, ի մասնաւորի՝ հայ երիտասարդութեան մօտ:

Ճաշկերոյթին ընթացքին գործադրուած է գեղարվեստական յայտագիր մը, որուն ընթացքին ներկայացուած են ասմունք, երգ եւ հայկական դասական ու ժողովրդական երգչախումբներու երգեր:

Վերջին բաժինով ընծ հրաւիրուած է թեմակալ առաջնորդը: Ան յիշած է Եկեղեցւոյ կարիքները եւ յայտարարած է Եկեղեցւոյ կնքահօր՝ Սարգիս եւ Սիւզան Կիրոսեան ամուսին անունը:

Սրբապանին յայտարարութենէն ետք կնքահայր Սարգիս Կիրոսեան երկու հարիւր հազար տուրք նուիրատուութեամբ ստանձնած է Փաստենայի Ս. Սարգիս Եկեղեցւոյ կնքահայրութիւնը: Երեկոյթին ընթացքին հանգանակուած է 650 հազար տուրքի գումար մը՝ Եկեղեցւոյ կառուցման համար: Երեկոյթը վերջ գտած է «Կիլիկիա» երգով:

### ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՏԱՆ ՄԵՋ ՎԵՐ. ԴՈՎՏ. ՄՈՎՍԷՍ ԺԱՆՊԱՉԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

25 Սեպտեմբերին Հայաստանի Գրողներու Տան մէջ տեղի ունեցաւ Հայ Աւետարանիչական Ընկերակցութեան նախկին գործադիր տնօրէն դոկտ. Մովսէս Ժանպաչեանի մահուան երկրորդ տարեկիցի յիշատակի հանդիսութիւնը: Հանդիսութեան ներկայ գտնուեցան եւ խօսք աւուր ԱժՄԻ նախագահ Վազգէն Մանուկեան, Ներսէս արք. Պողոսյան, վեր. Ռուբէն Փահլեւանեան եւ ընկերակցութեան Հայաստանի ներկայացուցիչ վեր. Ռուբէն Լեւոնեան:

Անոնք նշեցին, որ վեր. Մովսէս Ժանպաչեան մեծ ներդրում ունեցող երախտաւոր մըն էր Հայրենիքին եւ Արցախի նկատմամբ, ինչպէս նաեւ իր ծառայութեամբ եւ հոգեւոր փորձառութեամբ ճանչցուած նուիրեալ մըն էր ժողովուրդի հոգեւոր վերազարթնումի մարզին մէջ:

### ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՈՒԹԵԱՆ ԴԵՄ 521 ՕՐԻՆԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ

Հայաստանի բնագաղութական տեսչութեան կողմէ՝ 775 ձեռնարկութիւններու մէջ կատարուած ստուգումները բացայայտեցին օրինազանցութեան 521 պարագաներ, որոնց 26,8 առ հարիւրը՝ ջուրի պաշարներու, 33,2 առ հարիւրը՝ մթնոլորտային օդի պահպանութեան օրէնքներուն դէմ:

Արձանագրուած օրինազանցութիւններուն պատճառով տուգանքի ենթարկուեցան 405 պատասխանատու անձեր, որոնցմէ գանձուեցաւ 632 հազար դրամ, իսկ տուգանքին ընդհանուր չափն է 7237,34 հազար դրամ: Միայն Գեղարքունիքի եւ Տաւուշի տեսչութիւնները բացայայտած են 2,7 միլիոն դրամ գումարով կատարուած օրինազանցութիւններ:

www.hamazkayin.com

**Haigazian University**  
ADULT EDUCATION PROGRAM  
Learning designed for adults + Short affordable courses  
EVENING CLASSES

- ★ Business & Accounting: Business Communication, Principles of Economics, Accounting I with Computer Applications, Finance, Auditing  
Saturday seminar - Trainer from 'Management Plus'  
"Interviews by Objective"
- ★ Computers: Introduction to E-Commerce, Introduction to Windows/Internet/Word/Excel
- ★ Lifestyles & Social Issues: Conversational English, Conversational Armenian for Beginners

Apply now ! Classes begin October 7  
Haigazian University, Mexique Str. Kantari  
Tel./Fax: 01-349230/1, 01-353010/1/2  
E-mail: lifelong@haigazian.edu.lb

### Լ. Օ. ԽԱԶԻ «ՆԱՐՈՏ ԱՐՏԱԼՃԵԱՆ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՎՄԱՌՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ԱՐԱՐՏԸ



Խմբերգային կատարում

Լիբանանահայ Օգնութեան Խաչի «Նարոտ Արտալճեան» մանկապատանեկան գրադարանի աշակերտներուն ամառնային աշխատանքներուն աւարտը նշող հանդիսութիւն մը տեղի ունեցաւ Շարաթ, 28 Սեպտեմբեր 2002, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, ԼՕՍԻ «Ա. Պուլլուրճեան» ընկերարժեքական կեդրոնի «Թնճուկեան» սրահին մէջ: Ներկայ եղան ծնողը, ԼՕՍԻ Շրջանային վարչութեան եւ յանձնարարութեան անդամներ:

Սրահը զարդարուած էր աշակերտներուն ձեռագիր աշխատանքներով, Հայաստանի քարտեզով, ծաղիկներով: Բացման խօսքը ներկայացուց զարգացող Գրադարանի յանձնարարութեան ատենապետուհի էյօ Զոպուեան, որ շեշտը դրաւ գրադարանին մէջ մանկավարժական, հայոց լեզուի եւ մշակոյթի պահպանման համար տարուած աշխատանքներուն վրայ, առաջնորդութեամբ գրադարանի վարչական Բուզաննա Ուլիկեանի:

«Եօթը ուլիկներ» հեքիաթին ներկայացումն տեսարան մը:

Բարի գալուստի խօսքը ներկայացուց Ռ. Ուլիկեան՝ շնորհակալութիւն յայտնելով ծնողներուն, որոնք իրենց գաւազները վստահած էին այս գրադարանին, ուր յաճախած էր 6-14 տարեկան աւելի քան 100 աշակերտ: Անոնք իբրեւ դաս ստացած են ինչպէս ընթացանութեան, հայոց պատմութեան, լեզուներու ծանօթացման, նոյնպէս՝ տարրական գիտելիքներու, գրոյցներ գրագրացնելու, հեքիաթներ պատմելու ճամբով, ձեռագիր աշխատանքներու գանազան ձեւերու ծանօթացումով: Անոնք ամիսը անգամ մը հանդիպում կ'ունենան «Վանայ Զայն» միջոցով ունկնդիրներուն հետ՝ իրենց սորվածները: Գրադարանի աշակերտները մայրաքաղաքին մէջ պարբերաբար կը կատարեն պոստերներ:

Գործադրուեցաւ գեղարվեստական յայտագիր. խմբական արտասանութիւն, խմբերգեր՝ թատերական պատկերներու ներկայացումով:

Ուշագրաւ էր ամբողջ աշակերտութեան երեք խումբի բաժանումը Հայաստանի երեք հողային տարածքներու նուիրուած անուններով՝ Արցախ, Զաւախք, Նախիջեան, իւրաքանչիւր շրջանի մասին պատմական տեղեկութիւններ փոխանցելով: Իւրաքանչիւր աշակերտի շապիկի կուրծքին փակած տառ մը, յիշեալ հայկական շրջաններու անունները ամբողջացող՝ քով-քովի կանգնած դիրքով: Տպաւորիչ տեսարան մը, ներշնչող եւ ուսանելի:

Փակման խօսքը վիճակուեցաւ հանդիսութեան ներկայ Շահանդուխտին, որ իբրեւ գրադարանի բարեկամուհի, յաճախ ներկայ կը գտնուի նման հանդիպումներու: Այս անգամ եւս ան յայտնեց իր գնահատանքը գրադարանի առաքելութեան, հոն տարուած հայկերտման աշխատանքին, որ հետեւողական գործունէութեան վկայութիւններն է ԼՕՍԻ Շրջանային վարչութեան:

Հանդիսութեան աւարտին ներկաները հիւրասիրուեցան:

Պ.Ը.Ս.Կ.Ի.Ց

### «ԴԻԼԻԶԱՆ» ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆԸ ԿՐ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒԹԻՒՆ «ԼԻՆՍԻ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

Հստ «Դիլիջան» ժողովրդական ճարտարապետութեան արգելոց-թանգարանի տնօրէն Վիթոր Յարու-թիւնեանի, ներկայիս «Լինսի» Հիմնադրամի մասնագէտներուն հետ կը ճշդուի թանգարանին մէջ վերանորոգման աշխատանքներուն նախահաշիւը, որմէ ետք, մօտիկ ապագային տեղի պիտի ունենայ այդ աշխատանքներուն իրականացման մրցումը:

Թանգարանի տնօրէնին գնահատմամբ այս մշակութային կեդրոնին յատկացուելիք գումարը կը կազմէ մօտ 200 հազար տուրք: Ան յիշեցուց, որ հիմնադրամին միջոցներով թանգարանը վերանորոգելու հարցը բարձրացուցած է Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանի այս տարուան Ապրիլին Լոսիի եւ Տաւուշի մարզեր տուած աշխատանքային այցելութեան ժամանակ:

Արգելոց-թանգարանի նպատակն է ներկայացնել 19րդ դարու Դիլիջանի ճարտարապետութիւնը, նիստուկացը, խոհանոցը, արհեստները, 19րդ դարու կահուածքները ունենայ նաեւ թանգարանին պանդոկը: Այս տարի թանգարան այցելած է հազար հոգի՝ գլխաւորաբար Հայաստանի քաղաքացիներ:

ONE SECOND IS ENOUGH...  
Արագը կը ՊԱՏԱՀ ԵՐԿՎԱՐԿԱՆԻ ՄԸ ՄԵՋ...

...BUT WE USE THEM ALL.  
...ԻՍԿ ՄԵՆԻ ՆԵՐԿԱՅ ԵՆԻ ԱՆԷՆ ԵՐԿՎԱՐԿԱՆԻ.

ԱՏՀԻԼ AFHIL

Աֆիլ-Ի Ելճը, Բ. Յարկ, Գեռ. Եւ Յարկ. (01) 262231-242556-242557  
Կոդ. AFED, 24me étage, Tél. and Fax: (01) 262231-242556-242557

Հարսանեկան Քարտեր  
Օնի Հարսանոյ



# ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



## ԿԵՐԱՍՈՒՏ Է ԱՐԴԵՆ

### ՀԱՄԱՑԱՆՑԻ ՍԵՐՈՒՆԴԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Համացանցը, իր առաջնություններով, մեծ ազդեցություն է ունենում գործածության վրա և այն սերունդը, որ հասակն առնում է համացանցի զարգացումին և տարածումին հետ, անոր անիրական (վրջուլ) աշխարհին մեջ այնքան միացնում է, որ քան կեանքին: Այս երեւոյթը խոցելի է դատապարտելի է անպայման, որովհետև նույնիսկ համացանցը, ի հեռուկա իր անիրականության, արդէն դարձած է կեանքի անհրաժեշտութիւններէն մէկը և կը խոստանայ դառնալ նոր հազարամեակի քաղաքակրթութեան գլխաւոր խորհրդանշանը:

անոնք չապակողմնորոշուած չեն համացանցի երբեմն արեւելի, երբեմն խաղաղ շուրջընտանիքի, հարկ է նախ հասկնալ, թէ ինչն է, որ կը մղէ զանոնք դէպքի համացանց: Մասնազատներ կը ներկայացնեն հետեւեալ դրդապատճառները:

#### ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՈՐՈՆՈՒՄ

Ինքզինք ճանչնալու և արժեւորելու մղումը թէեւ գոյութիւն ունի բոլորին մօտ, սակայն յատուկ շեշտաւորում ունի պատանիներու հոգեկան աշխարհին մէջ՝ «Ինչպիսի՞սն անձ մըն եմ ես», «Ի՞նչ թուութեան գլխաւոր խորհրդանշանը:



Օգնելու համար պատանիներուն, որպէսզի

մէջ», «Ինչպիսի՞սն յարաբերութիւններ պէտք է մշակեմ» և նմանօրինակ հարցադրումներ յաճախ կը ճնշեն պատանիներու գիտակիցին և ենթագիտակիցին վրայ: Այս հարցումներու պատասխանները գտնելու և գոհացում ստանալու համար պատանին յաճախ կրնայ դիմել համացանցին:

#### ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹԵԱՆ ԶԳՎՅՈՒՄ

Ինքնութեան որոնումը նախ և առաջ կ'անցնի պատանիներու թիւնը՝ ճշդելու և շրջանակ կազմելու բովանդակները կ'ուզեն ըլլալ անկախ:



անդրադարձները, համացանցը տակաւին կը մնայ անապահով տեղ՝ հարկ եղած դաստիարակութիւնը չունենող անհասակներուն համար: Արդարեւ, համացանցի միջոցով հաստատուած բարեկամութիւնները յաճախ կ'ըլլան խախտուած, կոճակի մը սեղմումով կ'ազատուին մէկը կրնայ վերջ տալ յարաբերութեան մը, որմէ շատ բան կ'անկախ էր միւս կողմը: Վտանգներ, ինչպէս՝ շահագործում մարդոցմէ, որոնք իրենց ինքնութիւնը գաղտնի պահելու կարելիութիւնը շարաշահելով՝ կը դիմեն հազարումէկ նենգութիւններու:

դուրսէն զրկուած է: Ան նաեւ նուազ հոգ կը տանի իր առողջութեան և արտաքին երեւոյթին: Մեկնելով այս երեւոյթներէն՝ ծնողներ պէտք է դիմեն շարք մը քայլերու, որպէսզի հակազդեն տակ առնեն կացութիւնը, սակայն, ինչպէս մեծ թիւով այլ իրավիճակներու մէջ, այստեղ եւս խստութիւնն ու բիրտ վերաբերումը ժխտական անդրադարձ կրնան ունենալ: Հոգեբաններ կ'առաջարկեն հետեւեալ միջոցները:

● Ճանչնալ համացանցը և մասնակից դառնալ - Համացանցին վրայ պատանիներու «գործունէութեան» հետեւելու մտնելն ազդեցիկ միջոցներ են մասին հարկ եղած ծանօթութիւնները ունենալն է և պարբերաբար անոնք աշխատանքներուն մասնակից դառնալը՝ միասնաբար կայքեր այցելելով, անոնք նախընտրած կայքերուն մասին հարցնելով, առանց հարցաքննական շեշտի:


● Գիտակցիլ, թէ համացանցը ունի նաեւ դրական և օգտաշատ կազմեր, որոնք գերակշիռ են անոր ժխտական կողմերուն հետ համեմատաբար - Պատանիներուն խօսքի ժխտական կողմերուն մասին, սակայն խուսափիլ համացանցէն զրկելու մասին սպանալիքներ արտայայտել: Ի վերջոյ, համացանցի հասողութիւն կարելի է ունենալ նաեւ դպրոցներու, համայնականներու և «Ինթերնէթ քաֆէ»ներու մէջ: Այս բոլորը կարելի է հսկողութեան տակ առնել:

● Մոլութեան պարագային գիտակից կերպով միջամտել - Ճշդել համացանցի օգտագործման ժամանակացոյցը, գոյացական և ընդվզումի արտայայտութիւնները ընդունիլ համարելով: Եթէ հարկ եղած մօտեցումը ցուցաբերուի, համացանցը կը դառնայ ոչ այնքան օգտակար, որքան կարելի է երեւակայիլ, այլ՝ աւելի օգտակար, քան ինչ որ կարելի է երեւակայել:

## ԱՐՇԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԺՊԻՏ



«Քանի անգամ քեզի ըսած եմ, որ երբ համակարգիչը «սառի», լեզուդ մի՛ դպցնէր պաստառին»



«Երբ Փինոքեօ համացանցին վրայ կը գրուցէ իր դասընկերուհիներուն հետ...»

եւ համացանցը այդ զգացումը կը շնորհէ անոնք, յատկապէս՝ երբ կը դիտարկեն, թէ իրենց ծնողները շատ բան չեն գիտեր անոր մասին: Միւս կողմէ, անոնք իրենց նման «ըմբռնողներու կը հանդիպին համացանցին վրայ և կը կազմեն իրենց ուզած բարեկամութիւնները», կը փնտռեն խմբակներուն, որոնք կը զոհացնեն իրենց պահանջները:

#### ԸՆԴՎՁՈՒՄԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ

Դպրոցի և ընտանեկան ճնշումներ յաճախ ծանր կ'ազդեն պատանիներու վրայ, և համացանցին վրայ անանուն կերպով և, հետեւաբար, առանց պատասխանատուութիւն վերցնելու, պատանիներ կ'արտայայտեն իրենց ընդվզումը, «խուլիկանութիւններ» կ'ընեն և «կը պարպուին»:

Այս բոլորը կը կատարուին օգտագործելով համացանցին ընձեռած շարք մը կարելիութիւնները՝ կայքեր, Ե-մամակներ, «ֆորում»ներ և «զրոյցի սենեակներ», որոնց միջոցով անոնք լաւ թէ վատ ծանօթութիւններ կը հաստատեն, հարկաւոր թէ անհարկ գիտութիւններ կ'աւարտեն և կը փորձեն գոհացում տալ իրենց բազմապիսի հետաքրքրութիւններուն:

Այսպիսով, համացանցը կրնայ յուսախարութիւններու դուռ բանալ, պատանիին դիմաց: Եթէ նոյնիսկ մէկ կողմ դնենք պոռնկաբարկան և վայրագ բնոյթի նիւթերու հասողութեան դիւրութիւնը և անոնց յոռի

#### ԻՆՉ ՊԵՏՔ Է ԸՆՆԵԼ

Գիտնալու համար, թէ պատանի մը կը չափազանցե՞ր համացանցի օգտագործումը թէ ոչ, կարելի է հետեւիլ ստորեւ տրուած կէտերուն, որոնք ցուցանիչներ են համացանցի մոլութեան: Հոգեբան Քիմպրոլի Եանկի «Համացանցին մէջ բռնուած» գիրքէն քաղուած այդ ազդանշաններն են՝

Ա) Երբ ենթակային կը հարցուի, թէ որքան ժամանակ կ'անցնէ համացանցին վրայ և ի՞նչ կ'ընէ այնտեղ, ան կը ստէ և կ'ուրանայ:

Բ) Ենթական չափազանց յոգնած կը զգայ և անոր քնանալու ժամերը փոփոխութեան կ'ենթարկուին (համացանց օգտագործելու համար ան կ'անուր կ'արթննայ կամ ուշ կը քնանայ):

Գ) Ակադեմական և դպրոցական գծաւորութիւններ: Յաճախ պատանիին նիշերը անկում կ'արձանագրեն: Հարկ է այստեղ գրուիլ ըլլալ, որովհետեւ երբեմն պատանիին կ'ըսէ, թէ համակարգիչին վրայ դաս կը սորվի... մինչ ան խորատուգուած կ'ըլլայ զրոյցներու մէջ:

Դ) Ենթական նուազ հետաքրքրութիւն կը ցուցաբերէ իր բարեկամներուն, ծանօթներուն և... արտադասարանային աշխատանքներուն նկատմամբ (մարզական, դաստիարակչական թէ ընկերային):

Ե) Ենթական ախորժակը կը կորսնցնէ և կը դառնայ շիւրջապարտ, երբ համացանցի հասո-

**30 ԱՄԵՆԱԿԻ ԱՌԻԹՈՎ**  
**30,000\$ ԿՐԹԱԹՈՐԱԿ**  
**ՓՕԼԻԿԼՕԹ**  
 Թեքնիքը քոլեճի կարիքաւոր և փայլուն սաներու  
 ԵԱՆՕԹ. Լախապատուութիւնը պիտի տրուի կանուխ դիմողներուն  
 Արձանագրութիւն ամէն օր  
**ՓՕԼԻԿԼՕԹ քոլեճ, Տորոնթո 01 - 251320**  
 Տեղ և փոստի ՊԵՏՐՈՍ ՇԵՄՏԵՍԵԱՆ

**ՆՈՐ ԵՐԱԳԻՐՆԵՐ**  
**«ՆՈՐԹԸՆ ՄԻՍԹՐԵՄՈՒԼՐՔՍ 2003»**

Համակարգչային «առողջապահութեան» եւ անվտանգութեան մասնագետ «Սիմանթէք» ընկերութիւնը հրապարակեց «Նորթըն» համակարգչային ծրագրիին նորագոյն տարբերակը՝ «Նորթըն Միսթրեմուլթրքս 2003»:

Ծրագրի կ'ընդգրկէ համացանցին օգտագործումը հեղափոխող գործիչը նոր դրութիւն մը, ինչպէս նաեւ հակաժահրային բարեկարգուած ծրագրի՝ «Նորթըն էնթիվայրքս 2003»: Այս վերջինը կարելիութիւն պիտի ընձեռէ «Ինսթրեմէնթ մեթոտիկ» գրոյցի ընթացքին համակարգչային ժահրերու, «Տրովադայի ծի»երու և «որդ»երու դէմ պաշտպանուելու: «Սիմթրեմուլթրքս 2003» կ'ընդգրկէ նաեւ 3 յաւելեալ ծրագրիներ՝ «Նորթըն Կոսթ 2003», «Փորոսէս Վիլըր» և «Նիւ փըրֆորմընս թեսթ»:

«Նորթըն էնթիվայրքս» հակաժահրային նորագոյն ծրագրի, որ տեղ գտած է «Սիմթրեմուլթրքս» մէջ, ամբողջական ապահովութիւն կը շնորհէ «Եստե մեթոտիկ», «Է.Օ. Է. մեթոտիկ» և «Է.Ս. Է. մեթոտիկ» գրոյցի դրութիւնները օգտագործողներուն: Աւելի և և-նամակներ միջոցով տարածուող համակարգչային ժահրերու բացառութեամբ և ոչ-չացումը այս ծրագրիին շնորհիւ կը դառնայ աւելի ազդու:

«Սիմանթէք» նաեւ հրապարակած է «Սիմթրեմուլթրքս 2003»-ի «Փորոսէնթըլ Էսթիմը» (արհեստավարտ տարբերակ), յատուկ ընկերութիւններու և մասնագետներու: «Նորթըն Միսթրեմուլթրքս 2003»ը կ'արժէ 70 տոլար: Ծրագրիին մասին յաւելեալ մանրամասնութիւններ ստանալու համար կարելի է այցելել «Սիմանթէք» ընկերութեան պաշտօնական կայքը՝ [www.symantec.com](http://www.symantec.com):

**ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԿԱՅՔ**

Տեղեկատուական արհեստագիտութեան նորութիւններուն ծանօթանալու համար այսուհետեւ կարելի է չկայ լրատուական կայքէ մը ուրիշը թափառելու: Համացանցի [www.wired.com](http://www.wired.com) հասցէով կայքը կը կատարէ այդ մէկը և բազմաթիւ կայքերէ տեղեկատուական արհեստագիտութեան յատուկ լրատուութիւններու «կապ»եր կը տեղադրէ իր գլխաւոր էջին մէջ:

Կայքը նաեւ ունի բաժանորդագրութեան դրութիւն, որուն միջոցով Ե-մամակներ կ'ուղարկէ տեղեկատուական արհեստագիտութեան սիրահար իր բաժանորդներուն:

**ԻՆՉ Կ'ԸՆՆԵՆ ԿԱՍ Կ'ԸՆՆԵՆ ՓՕԼԻԿԼՕԹ**  
**ԸՈՒԼԵՃԻ ԾՐԱՆԱԿԱՐԿՆԵՐՈՒ**  
 «... Փօլիկլօթ Բոլիճէն մասնակցեցայ BT3 քննութեանը, Լիբանանի մէջ բարձրագոյն սիշը ապահովող առաջին հիւզին մէջ էի: Ապա յաջողեցայ նաեւ TS վկայականի քննութեանը: Այժմ կ'աշխատիմ որպէս գլխաւոր հաշուապահ ուկերչական մեծ ընկերութեան մը մէջ. Պուրճ Համուտ...»:

Ի ԱՉԻԿ ՍՈՒՐԱՏԵԱՆ ԹԱԼԻՆ ԵՐԱՐԷԱՆ

# Մանկապատանեկան

## ԿԵՐԱՍՈՒՏ Է ԱՐԴԵՆ

### ԻՆՉ ԸՆԵԼ ԴԱՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ

«Ես միշտ տարօրինակ վախ մը կը զգամ, երբ պետք է բան մը ընել ամբողջ դասարանին առջեւ, բանաստեղծութիւն մը արտասանել, հարցաքննուիլ... Ասիկա ինձի միշտ անձկութիւն կը պատճառէ եւ արգելք կ'ըլլայ, որ ես լաւ աշխատիմ»:

#### ՄԱՐԴՈՅ ԱՌՁԵՒ ԽՕՍԻԼ...

Ասիկա իսկական չարաճախ մըն է մեզմէ ամէնէն ամօշխոտներուն համար: Փորձ ցաւ, տաքութիւն, չոր բերան, դողդողացող ձայն... Ահա, թէ ինչպէս կ'արտայայտուի այս անհանգստութիւնը: Ամէն անգամ երբ ուսուցչուհին կ'ըսէ՝ «Ո՞վ կ'ուզէ

մտածես որոշում տալէ առաջ եւ վերջաւորութեան բնաւ վստահ չես ըլլար, թէ ճիշդ որոշում տուած ես: Դժուար է այս ձեռքով շարունակելը: Պէտք է պայքարիլ այս վիճակին դէմ: Ի՞նչպէս: Ամէն որոշում մը պէտք է տաս, ցանկ մը կազմէ անոր թեր եւ դէմ կէտերուն: Երկու ցանկերուն կէտերը գումարէ եւ ընտ-

ուելիս շատ բարեկամներ, զորս կը սիրես, եւ որոնք իրենց կարգին քեզ կը սիրեն: Դու Վստահ ես բարեկամ մտածեցէ՞ր, սակայն երբեմն կը կասկածիս անոնց բարեկամութենէն:

Օրինակի համար, ընկերներէ դէմ կը պատիկ հաւաքոյթ մը կը կազմակերպէ տանի մէջ, եւ ձեռք բերուած փողով շարունակելով ըլլան: Սակայն, դժբախտաբար, այդ շարժման վերջին դու ձեռք բերած գումարը պիտի թողնես: Սոսախար, որ ներկայ պիտի չըլլաս հաւաքոյթին, դու կը մտածես, թէ այս առիթով ընկերները իրարու հետ շատ զօրաւոր կապեր պիտի հաստատեն: Եւ երբ դու վերադառնաս, անոնք քեզ այլեւս պիտի չսիրեն: Այս մտածումը քեզ անհանգիստ կ'ընէ եւ անձկութիւն կը պատճառէ:

Դու շատ գէշ շարժման վերջ մը կ'անցընես: Սակայն հարկ չկայ այս ձեռքով ներդրումը: Ընկերները միշտ ընկերները պիտի մնան: Նոյնիսկ պիտի ըլլան անձեր, որոնք քեզ կարօտցած պիտի ըլլան:



#### ՔԱՆԻ ՄԸ ՀՆԱՐՆԵՐ

Այս բոլոր պատիկ բաները միասին խմբուելով՝ մէջը կը յառաջացնեն այն վախը, զոր դու կը զգաս գրատախտակ ելլելու ընթացքին: Ահա՛ քանի մը հնարներ:

- Ուսուցչուհիի հետ խօսի: Անոր բացատրէ զգացածդ: Մի՛ մոռնար անոր ըսելու, թէ ասիկա կը խանգարէ, եւ դու լաւ չես կրնար աշխատիլ: Այս ձեռքով ան կողքիդ կ'ըլլայ հարցաքննութիւններու ժամանակ:
- Թատրոնի դասեր առնել: Սկիզբը վստահաբար դժուար պիտի ըլլայ: Սակայն ասիկա քեզ ինքնավստահութիւն կրնայ տալ: Ընկերք մը հետ կրնաս արձանագրուիլ թատրոնի դասի մը եւ միասին կրնաք բաժնեկից ըլլալ այս իւրաքանչիւր վայրկեաններուն:

## ՀԱՐՑԱՐԱՆ

1) Ո՞վ հնարած է Տոն Քիչոթի տիպարը:  
 - Ժիւլ Կեռն  
 - Սերվանթես  
 - Հեմինկուէյ



13) Ո՞րն է Պուլթանի մայրաքաղաքը:  
 - Փոլս  
 - Պանթոք  
 - Քաթանտու

2) Նաւերը եւ ուրիշ մեքենաներ ո՞ր կը կորստուին խորհրդաւոր ձեւով:  
 - Նաւերը  
 - Երկաթուղիները  
 - Միջին Արեւելքէն

8) Ուրիշ՞ ծնած է շեփորը:  
 - Եւրոպայի հարաւէն  
 - Եւրոպայի հիւսիսէն  
 - Միջին Արեւելքէն



3) Ո՞ր ջերմաստիճանին հասնելով ջուրը կ'եռայ:  
 - 100,000 քմ./երկվայրկեան  
 - 200,000 քմ./երկվայրկեան  
 - 300,000 քմ./երկվայրկեան

9) Քապիլաները ո՞ր երկրին մէջ կ'ապրին:  
 - Ինդոնեզիա  
 - Մեքսիկա  
 - Թայլանտ

4) Տաքթըր Ուաթսոն ո՞ր նշանաւոր գաղտնի ոստիկանին բարեկամն է:  
 - Սթիւարտ  
 - Մարտին  
 - Քարոլ

10) Ո՞ր ծովը կը բաժնէ Եմէնը Եթովպիայէն:  
 - Սուէզի  
 - Երեւան  
 - Բալթիկ

5) Ի՞նչ արագութեամբ կը տեղափոխուի լոյսը:  
 - 300,000 քմ./երկվայրկեան  
 - 300,000 քմ./երկվայրկեան  
 - 300,000 քմ./երկվայրկեան

11) Մեքսիկական ո՞ր քաղաքակրթութեան կը պատկանի այս արձանը:  
 - Մեքսիկական  
 - Եւրոպական  
 - Ինդիական



14) Ուրիշ՞ եկած է Հօ խաղը:  
 - Չինաստանէն  
 - Մեքսիկայէն  
 - Թայլանտէն



6) Ամէնէն մեծ թիթեռնիկին մեծութիւնը կը հասնի (բաց թեւերուն լայնքը):  
 - 25 սմ-ի  
 - 28 սմ-ի  
 - 32 սմ-ի

12) Էյֆելի աշտարակը շինուած է տարուան ո՞ր միջազգային ցուցադրութեան:  
 - 1889-ի  
 - 1899-ի  
 - 1909-ի


7) Ո՞ր կարելի է տեսնել նման տեսարաններ:  
 - Սահարայի անապատին մէջ  
 - Նամիպիոյ անապատին մէջ  
 - Արիզոնայի անապատին մէջ

15) Ո՞ր երկրին կը պատկանի Չատիկ կղզին:  
 - Ֆանատայի  
 - Չիլի  
 - Ճապոնի


(Պատասխանները ↓)

ՎՊԻԿ (ՏԻ)  
 Երկրորդային (ԿԻ)  
 Երկրորդային (ՏԻ)  
 46881 (ՇԻ)  
 Երկրորդային (ԿԻ)  
 Երկրորդային (ՏԻ)  
 Երկրորդային (ՏԻ)  
 Երկրորդային (ՏԻ)  
 Երկրորդային (ՏԻ)


## ԺԱՄԱՆՅ




1 - 29 կետերը իրարու միացուր՝ գտնելու համար պահուած պատկերը:




Կրնա՞ս գտնել պուպրիկին համապատասխանող հագուստը եւ կոշիկները:



Քանի՞ շրջանակ կը տեսնես:



Կրնա՞ս գտնել ձախ կողմը գտնուող կնիքին համապատասխանող պատկերը:



Կրնա՞ս վերակազմել այս կողմի նկարը:

գրատախտակ ելլելը», տաղանապը դարձեալ կը սկսի: Դու կը փորձես գրութիւն իջեցնել՝ յուսալով, որ դարձեալ քեզի ուշադրութիւն պիտի չդարձնեն...

րէ: Դու քեզ համոզէ, որ ասիկա լաւ պատասխան է եւ թոյլ մի՛ տար, որ շուրջինները վրադ ազդեն:

Բ) Վստահութեան պակաս ուրիշներու հանդէպ. - Վստահաբար




ԻՆՉ ԸՆԵԼ

Ա) Ինքնավստահութեան պակաս. - Հաւանաբար դու անձ մըն ես, որ ինքնավստահութեան պակաս ունիս: Յաճախ ինքզինքիդ հարց կու տաս, թէ որոշումդ ճիշդ էր: Երկար ժամանակ կը

Պատրաստե՛ք ՇՈՂԻԿ ՏԵՐ ԴՈՒԿԱՍԵԱՆ



# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր



## «ՎԱՅՄՈՅ» ԲԱԺԱԿ

## 1497 ԱՍԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ

## ԵՈՒ. Է. ԷՖ. Ա. Ի ՄՐՑԱՇԱՐՔ

### ԱՅՍՕՐ՝ ՆԵԺՄԷ - ԱՆՍԱՐ ԿԻՍԱԿԱՐՏԱԿԱՆ ՏԱՔ ԸԱԿԱՏՈՒՄ

Ֆուտբոլի «Վայսրոյ» բաժակի մրցաշարի 9-հանգրուանի մրցումներին ետք, յստակացան կիսա-արտական հանգրուան հասնող չորս խումբերը, որոնք իրենց մրցումները պիտի կատարեն այսօր եւ վաղը: Անոնք են. Նրթմէ, Անսար, Շապապ Սահէլ եւ Ահո:

Այսօրուան մրցումը իրարու դէմ պիտի հանէ Նրթմէն եւ Անսարը, իսկ վաղուան մրցումը՝ Շապապ Սահէլն ու Ահոն: Անոնք երկուքն ալ տեղի պիտի ունենան Սալայի ֆաղաքապետարանի դաշտին վրայ (ժամը 20:00ին):

Ստորեւ առաջին երեք հանգրուաններուն մրցումներուն արդիւնքները.

**Ա. ՀԱՆԳՐՈՒՄԸ**  
Նրթմէ - Թատամոն Սուր 4-0  
Անսար - Սաժէս 2-0

**Բ. ՀԱՆԳՐՈՒՄԸ**  
Շապապ Սահէլ - Անսար 2-0  
Ահո - Թատամոն Սուր 2-2

**Գ. ՀԱՆԳՐՈՒՄԸ**  
Շապապ Սահէլ - Սաժէս 1-0  
Նրթմէ - Ահո 1-1

### ՉԻՆԱՑԻՔ ԱՌԻԹ ՉԵՆ ՏԱՐ ԻՐԵՆՑ ՄՐՑԱԿԻՑՆԵՐՈՒՆ

Փուլանի մէջ (Հա-րաւային Քորէա) տեղի ունեցող ասիական 14րդ խաղերուն հինգերորդ օրուան մրցումներուն, դարձեալ տիրապետեցին չին մարզիկները, որոնք դարձաւ ոսկի մետալներ հնձելով 71ի բարձրացուցին իրենց ոսկիներուն զուտարը:

Երկուսն մրցումներուն, սակայն, ուշադրաւ դարձաւ Սերկէյ Ֆիլիմոնովի (Ղա-պախստան) հաստատած աշխարհի նոր մրցանիշը, տղոց ծանրաբարձութեան 77 քկ. դասակարգին մէջ, երբ ան բարձրացուց 173 քկ.:

Ուշադրաւ երեւոյթներէն մէկը եղաւ նաեւ Չու Եանուէի (Չի-նաստան) շահած ոսկի մետալը աղջկանց 50 մետր ազատ լողի մրցումներուն, երբ արձանագրեց 25" 42 արդիւնք մը:

4x100 մետր լողարշաւի մրցումներուն ոսկի մետալին տիրացաւ Ճափոն, որ արձանագրեց 3' 37" 45 արդիւնք մը:

Տղոց թենիսի մրցաշարքին գծով, Հարաւային Քորէա 3-2 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Թայուանը, ապահովեց աւարտական մրցումին իր տունը, որ կը ձակարկէ Չինաստանի դէմ:

Ստորեւ՝ մետալներուն դասաւորումը՝ հինգերորդ օրուան մրցումներէն ետք.

	ՈՍԿԻ	ԱՐԾ.	ԳՐՈՆՁ
1. Չինաստան	71	33	21
2. Ճափոն	24	33	30
3. Հար. Քորէա	22	26	32
4. Հիւ. Քորէա	6	8	8
5. Ղապախստան	6	5	9
6. Ուկրաինա	3	5	6
7. Թայլէնտ	2	6	3
8. Թայուան	2	4	9
9. Հոնկ Բոնկ	2	2	4
10. Մալեյիա	2	2	2

### ԵՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՀԱՐԱԹԱՎԵՐՁ

Շարաթավերջին, եւրոպայի մէջ տեղի ունենալիք ախոյեանութեան մրցումներուն (Անգլիա, Ֆրանսիա, Սպանիա, Պունտիստիկա եւ Ֆրանսա) ընթացքին պիտի կատարուին հետաքրքրական ճակատումներ. պարագլուխի դիրքը գրաւող խումբերը մեծ ճիգ պիտի կատարեն իրենց դիրքերէն չզիջելու համար:

Նշենք, թէ Օքսֆորդ, Ինթեր Միլան, Պալերմո Միլանիս, Վալենսիա եւ Արսենալ կը գրաւեն պարագլուխի դիրքերը:

Ստորեւ՝ շարաթավերջին տեղի ունենալիք ախոյեանութեան մրցումներուն մասին որոշ պատկերացում մը.

**ԱՆՂԻԱ**  
Զրդ հանգրուանի մրցումներուն նախորեակին, Արսենալ եւ Լիվերփուլ կը հանդիսանան այն միակ երկու խումբերը, որոնք ցարդ պարտութեան ենթարկուին:

Արսենալ, որ այժմ երկու կէտի առաւելութիւն ունի Լիվերփուլի վրայ (2րդ), իր մրցումը պիտի կատարէ «Հայպըր»ի մէջ, հիւրընկալելով Սանտորլէնտը (16րդ):

Հակառակ անոր, որ մարզիչ Արսէն Վենկերի կազմէն պիտի բացակայի Թիերի Հանրի (վիրաւոր), սակայն անոր բացակայութիւնը զստահարաբար պիտի չազդէ լոնտոնեան կազմին վրայ: Սանտորլէնտէն պիտի բացակային Քեֆին Ֆիլիպս եւ Ճէյսոն Մաքթիթ (վիրաւոր):

«Ենֆիլդ»ի մէջ Լիվերփուլ կարեւոր մրցում մը ունի կատարելիք, երբ հիւրընկալէ Չելսիին (5րդ): Մարզիչ Ժերար Զոլիէի կազմէն պիտի բացակային Վլատիմիր Սմիչէր եւ Մարքուս Պապլ (վիրաւոր): Մանչեսթըր Եունայթեթը (4րդ) իր մրցումը պիտի կատարէ Երկուշաբթի, որ «Սան Սի-րո»ի մէջ հիւրը պիտի ըլլայ Ա. Սէ. Միլանի, ոչ թէ միայն կը գրաւէ վերջին դիրքը, այլ անիկա այն միակ խումբն է, որ իր կատարած երեք մրցումներուն ալ պարտութիւն կրած է:

Երկուսն ալ պիտի հիւրընկալէ Քոմոն (17րդ) դաշտ պիտի ներկայանայ առանց Ալեսիո Թաքի-նարտիի եւ Իկոը Թուտորի (երկուքն ալ կախակալուած):

**ՍՊԱՆԻԱ**  
Զրդ հանգրուանի մրցումները պիտի ըլլան բաւական տաք, նկատի ունենալով, որ առաջին երեք դիրքերը գրաւող խումբերը՝ Վալենսիա (առաջին), Սելթա Վիկո (2րդ) եւ Ռէալ Մադրիդ (3րդ) միայն կողմերէն չեն տարբերութեամբ է, որ ետ կը մնան իրարմէ: Անոնք երեքը ունին 10ական կէտ:

Շարժուան գագաթի ճակատումը տեղի պիտի ունենայ Վալենսիայի դաշտին վրայ, ուր անիկա պիտի հիւրընկալէ Նոնիան (11րդ): Դաշտին տէրերը, որոնք անցեալ Յունուտեանի ի վեր ախոյեանութեան մրցումներուն իրենց դաշտին վրայ պարտութիւն չեն կրած, պիտի պայքարին յուսախաբ չեն իրենց համակիրները: Ինչպէս Մադրիդ (1րդ), որ պիտի հիւրընկալէ Ալաւէսը (11րդ), դաշտ պիտի ներկայանայ Սան Սեբաստիանի մէջ, որ «Սան Սի-րո»ի մէջ հիւրը պիտի ըլլայ Ա. Սէ. Միլանի, ոչ թէ միայն կը գրաւէ վերջին դիրքը, այլ անիկա այն միակ խումբն է, որ իր կատարած երեք մրցումներուն ալ պարտութիւն կրած է:

### ԼԻԲԱՆԵՆ ՊԻՏԻ ՅԻՒՐԸՆԿԱԼԷ 2009Ի ԱՍԻԱԿԱՆ ՉՄԵՈՆԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ

Անցնող քամի մը օրերուն, Փուլանի մէջ (Հարաւային Քորէա) տեղի ունեցած խորհրդակցութիւններէ եւ ժողովներէ ետք, պաշտօնապէս յայտարարուեցաւ, որ Լիբանան պիտի հիւրընկալէ 2009ի ասիական ձմեռային խաղերը, իր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով:

Թէեւ պայքարը բաւական սուր էր Չինաստանի եւ Լիբանանի միջեւ, սակայն նկատի ունենալով, որ առաջինը պիտի հիւրընկալէ 2007ի ասիական ձմեռային խաղերը, Լիբանան պիտի հիւրընկալէ նոյն այդ խաղերը՝ երկու տարի ետք:

### Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կիրակի, 27 Նոյեմբեր 2002ին Գիւտ Խաչի Կիրակից, պիտի տօնախմբուի Ս. Նշան Մայր եկեղեցու անուանակոչութիւնը:

Այն հաւատացեալները, որոնք կը փափաքին մատարուելու ոչխար նուիրել, եւ կամ մասնակցիլ նիւթակապ նուիրել, թող բարի ըլլան կապ պահել թողակապութեան քարտուղարութեան, հեռաձայնելով 01-981102/3 եւ կամ տեղի հոգ 03-885941:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

### ՎԵՐԱՄՈՒՏ ԴՊՐԵՎԱՆԵՐԻ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեւանքի տեսչութիւնը ուրախութեամբ կը յայտարարէ, որ յառաջիկայ օրերուն պիտի վերաբանայ իր դռները՝ սկսելու համար 73րդ ուսումնական - կրթական տարեշրջանը: Առ այդ, կը հրաւիրենք մեր բոլոր հին թէ նոր սաները՝ իրենց ծնողներուն հետ ներկայանալու դպրեւանքի տեսչութեան, Պիքֆայա, առաւելագոյնը Շինգազաքի, 10 Նոյեմբերի առաւօտուն:

Վերջին առիթ մը եւս պիտի տրուի բոլոր անոնց, որոնք կը փափաքին դպրեւանքի սան դառնալ, ներկայանալու տեսչութեան եւ մուտքի քննութիւն անցընելու, մինչեւ յառաջիկայ Շինգազաքի, 10 Նոյեմբեր:

Ներկայացող թեկնածուները պարտին իրենց հետ բերել.՝  
1.- Բարի վարուց վկայագիր՝ ծխատեղի քահանայէն:  
2.- Հաստատագիր՝ դպրոցի տնօրէնութենէն:  
3.- Վերջին տարուան վիճակագրոյց:  
4.- Բժշկական վկայագիր:  
5.- Անճապարհի եւ ընտանեկան տեսրակի (տաֆթար աիլէի) լուսապատճեն:  
6.- Երկու գումարու լուսանկար:  
ՏԵՏՉՈՒԹԻՒՆ ԳՊՐԵՎԱՆՈՒՅ

### ԱՌԱՋԻՆ ՔԱՐԻ ԼՈՒՅՑՈՒՄ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Յուրախութիւն Ս. Վարդանանց եկեղեցու ծխականգներուն եւ մեր սիրելի հաւատացեալ ժողովուրդին, կը յայտարարենք, թէ Սրբոց Վարդանանց նորակառոյց եկեղեցու ամբողջացման եւ բարեպարգման աշխատանքը սկսած է արդէն:

Այս առիթով արտաքին քարապատումի առաջին քարի լուացումն ու օրհնութիւնը պիտի կատարուի այս Կիրակի, 6 Նոյեմբեր 2002, ժամը 10:30ին, յընթացս Ս. պատարագի, ձեռամբ՝

### ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ

Առաջնորդ Լիբանանի Հայոց թմի  
Կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ ըլլալու հոգեպարար սոյն արարողութեան, աղօթելու աշխատանքներու բարուր ընթացքին եւ եկեղեցու բարեպարգման գործին ամբողջացման համար:

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ  
Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

### ՌԵԼԱՔ ԸԱՍ. Կը ստանձնէ ոսկերիչներու յատուկ ՈՍԿԻԻ ԹԱՓՈՒԹ (GOLD CASTING) ԳՈՐԾԵՐ

արդիական ելեկտրոնիք մեքենաներով  
●Մաքրութիւն  
●Բժախնդիր աշխատանք  
●Մասնագիտացած անձնակազմ

Մատչելի գին, ձրի սպասարկութիւն  
Հեռաձայն / ֆաքս: 01 - 889188  
եւ 03 - 375724

### ՃԱՏՐԱԿ

1

ՍԵՒԵՐ ԿԵ ՄԱՂԱՆ  
ԵՒ ՄԱԹ 2 ԵԱՐԺՈՒՄՈՎ

ԱԼԵՔՍԱՆԴՐԵ Ռ. - ՍԵՅՆՋՊ.  
(2002)

2

ՍԵՒԵՐ ԿԵ ՄԱՂԱՆ  
ԵՒ ՄԱԹ 2 ԵԱՐԺՈՒՄՈՎ

ՊԵՐԵՆՏՐՕ Ս. -  
ՍԱՐԻԵՍ Ս.  
(2002)

3

ՍԵՒԵՐ ԿԵ ՄԱՂԱՆ  
ԵՒ ՄԱԹ 2 ԵԱՐԺՈՒՄՈՎ

ՍԱՆՋՍ. - ՎԱՍԱՆՈՒՄՍ.  
(2002)

4

ՃԵՐԱՎԵՐԸ ԿԵ ՄԱՂԱՆ  
ԵՒ ՄԱԹ 2 ԵԱՐԺՈՒՄՈՎ

ՍԱՐԻՕ ՌԻՄԻ  
(2002)

Խնդիրներուն լուծումը տեսնել՝ 10րդ էջ  
Այս սիւնակը պատրաստեց՝ Էլի Հուլիշեան

